

# ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵԱՍ

## Բէօնտզէնեան ճառագայթները

10 տարի անցաւ այն օրից, ինչ որ Վիւրցբուրգի համալսարանի պրօֆէսօր Ֆրիդրիքոս Կօնրադ Վիլհէլմ Բէօնտզէնը 1896 թ. յունուարի 23 ին առաջին հանգամ հասարակութեան ծանօթացրեց իւր գտած անյայտ ճառագայթների հետ: Եւ երբ ներկայ եղողները լուսանկարչական թիթեղի վերայ տեսան ճշտիւ նկարուած՝ այժմ հանգ. Կէլլիկէր պրօֆէսսօրի ձեռքի ոսկրները-ամենքի համար պարզուեց, թէ այդ գիւտը ինչ մեծ նշանակութիւն պիտի ունենար բժշկականութեան դիագնօստիկի համար: Ժողովը որոշեց նորագիւտ ճառագայթները անուանել գտնողի անունով՝ Բէօնտզէնեան:

Դորանով հիմք դրուեցաւ մի նոր գիտութեան: Այդ ճառագայթներով այժմ կարողանում են տեսնել ոչ միայն ձեռքի ոսկրներն ու յօդերը, մարմնի մէջ մնացող գնդակն ու ասեղը, այլ և զարմանալի կերպով արտացոլում են լանջավանդակը, կողերով և անրակներով. նոյն իսկ պարզ կերպով նշմարւում են սրտի մկանների կծկումներն ու ընդլայնուիլը:

Բեօնտզէնեան ճառագայթների օգնութեամբ մենք կարող ենք տեսնել այժմ թէ կոտրած ոսկրները գիպսի փաթեթի մէջ կանոնաւոր են դասաւորուած թէ ոչ և որոշել ոչ միայն կոտրած տեղերը, այլ և ամենտեսակ ձգողութիւններ, դուրս ընկածները և ուռոյցները: Ատամի մի քանի տեսակ հիւանդութիւններ կարելի է որոշել միայն այդ ճառագայթներով: Շատ անգամ այդ ճառագայթներն են պարզում որ ոսկրներն ու յօդերն անվնաս են, այլ հիւանդութեան պատճառը մարմնի փափուկ մասերումն է գտնւում, օր. զարկերակների պնդութիւնը. կրծքի վերաբերմամբ բեօնտզէնեան ճառագայթները երբեմն որոշում են սրտի մեծութիւնը, երբեմն յաջողում է պարզել փոփոխութիւնները: Եւ զեռ հետզհետէ նորանոր գործադրութիւն է ստանում նա:

Բայց բեօնտզէնեան ճառագայթները միայն հիւանդութիւնը ճանաչելու չեն ծառայում, այլ նաև որպէս բժշկութեան միջոց:

Կարելի է շատերը չգիտեն իսկ, որ մի առանձին գիտութիւն կայ—բէժնագէնեան վիրաբուժութիւն: Բէժնագէնեան ճառագայթները ցոյց տուին և մի յատկութիւն, որ քայքայում են հիւանդ հիւստեաները, առաւել քան առողջները, որի պատճառով կարելի է բժշկել հիւանդ տեղերը, առանց առողջներին ձեռք տալու: Այսպէս նաև նոցա շնորհիւ յաջողութեամբ բժշկում են դանազան մորթու վրայի հիւանդութիւններ և լէվկէմի կոչուած վտանգաւոր հիւանդութիւնը: Բէժնագէնեան ճառագայթները մեծ դեր են խաղում և խլիբդ (քաբէ) ու նման հիւանդութիւններ բժշկելիս: Ճառագայթների քայքայիչ ոյժը ներգործում է ուռոյցի վերայ: Այդ տեսակ ուռոյցներ առաջ կտրում են դանակով և ապա մնացորդները ճառագայթներով քայքայում, ապագայ կրկնութիւններից ազատելու համար: Բժշկւում են նաև այլ և այլ ուռոյցներ կամ փոքրացնում այնքան, որ հեշտ է լինում վիրահատելը:

Բէժնագէնեան ճառագայթները դեռ մեծ ապագայ ունին բժշկականութեան մէջ և մօտազայ ապագան պէտք է փայլուն հետևանքներ տայ այդ նկատմամբ:

ՊՐ. ՆՈՒԱՐԴ ԱՂԱՆԵԱՆՑ